րուդ վրայով կը մտածէր :

24 Բու վկայութիւններդ ալ իմ ուրախու-
թիւնս՝ ա իմ խորհրդականներս են :

Տ Ա Լ Ի Թ

- 25 Իմ անձս հողին կը փակչի . կենդանացուր
զես բու խօսքիդ համեմատ :
- 26 Իմ ճամբաներս պատմեցի , ու դուն ինձի
պատասխան տուիր . սորվեցուր ինձի բու կա-
նոններդ :
- 27 Բու հրամաններուդ ճամբան ինձի իմացուր ,
և բու սքանչելիքներուդ վրայով պիտի մտա-
ծեմ :
- 28 Իմ անձս տրամութեանէն կը հալի . հաստա-
տէ զես բու խօսքիդ համեմատ :
- 29 Ստութեան ճամբան հեռացուր ինձմէ , ու
բու օրէնքդ շնորհէ ինձի :
- 30 Ճշմարտութեան ճամբան ընտրեցի , և բու
դատաստաններդ ի՛մ առջեւ դրի :
- 31 Բու վկայութիւններուդ յարեցայ , ո՞վ Տէր՝
իս մի՛ ամչցրներ :
- 32 Բու պատուիրանքներուդ ճամբուն մէջ
պիտի վազեմ . ինչու որ դուն իմ սիրտս պիտի
լայնցընես :

Հ Ի

- 33 Ո՞վ Տէր՝ սորվեցուր ինձի բու կանոններուդ
ճամբան . ու մինչև վերջը պիտի պահեմ ա-
նիկայ :
- 34 Իմաստուն ըրէ զես , որ բու օրէնքդ պա-
հեմ , ու բոլոր սրտով անիկայ ՚ի զործ դնեմ :
- 35 Առաջնորդէ ինձի բու պատուիրանքներուդ
շաւիղին մէջ . ինչու որ անոր հաւնեցայ :
- 36 Իմ սիրտս բու վկայութիւններուդ յօժա-
րեցուր , ու չէ թէ ազահութեան :
- 37 Եւ դարձուր իմ աչքերս , որ սնտի բան

չտեսնեն . և զես քու ճամբուդ մէջ կենդանա-
ցուր :

38 Հաստատէ քու խօսքդ քեզմէ վախցող ծա-
ռայիդ վրայ :

39 Ե՛տ դարձուր ինձմէ իմ նախատինքս , ուս-
կից որ կը վախնամ , ինչու որ քու դատաս-
տաններդ բարի են :

40 Ահա ցանկացայ քու հրամաններուդ . քու
արդարութեանդ մէջ կենդանացուր զես :

Վ Ա Վ

41 Ո՛վ Տէր՝ թող իմ վրաս դայ քու ողորմու-
թիւնդ , և քու փրկութիւնդ քու խօսքիդ
համեմատ :

42 Ու ես խօսքով պատասխան պիտի տամ իս
նախատողին . վասն զի քու խօսքիդ յուսա-
ցած եմ :

43 Եւ ճշմարտութեան խօսքը բնաւ մի՛ հեռա-
ցընէր իմ բերնէս . ինչու որ քու դատաստան-
ներուդ յուսացած եմ :

44 Ու քու օրէնքդ միշտ պիտի պահեմ յաւի-
տեանս յաւիտենից .

45 Եւ լայնարձակ քեզէ մէջ պիտի քալեմ ,
քանզի քու հրամաններդ խնդրեցի :

46 Ու քու վկայութիւններդ թաղաւորներուն
առջին պիտի խօսիմ , և պիտի համհնամ :

47 Ու պիտի ուրախանամ քու պատուիրանք-
ներովդ , որոնք սիրեցի :

48 Եւ ձեռքերս դէպ՛ի քու պատուիրանքնե-
րուդ պիտի վերցընեմ , որոնք սիրեցի , ու
քու կանոններուդ վրայով պիտի մտածեմ :

Չ Ա Յ Ի Ն

49 Յիշէ քու ծառայիդ եղած խօսքը , որուն
վրայ ինձի յուսալ տուիր :

50 Իմ նեղութեանս մէջ մխիթարութիւնս աս
է . վասն զի քու խօսքդ զես կենդանա-
ցուց :

51 Ամբարտաւանները խիստ շատ ծաղը ըրին
զես . Բայ ես քու օրէնքդ շխտորեցայ :

52 Ո՛վ Տէր՝ քու առջե դատաստաններդ յիշե-
ցի , ու մխիթարուեցայ :

53 Սուկումը իս բռնեց ան ամբարիշտներուն
համար , որ քու օրէնքդ կը թողուն :

54 Քու կանոններդ ինձի երկր եղան իմ
պանդխտութեանս տանը մէջ :

55 Ո՛վ Տէր՝ զիշերը քու անունդ յիշեցի , ու
քու օրէնքդ պահեցի :

56 Աս եղաւ ինձի , ինչու որ քու հրամաններդ
կը պահեմ :

Խ Է Թ

57 Դու՛ն իմ բաժինս ե՛ս՝ ո՛վ Տէր . ըսի որ քու
խօսքերդ պահեմ :

58 Բոլոր սրտով քու երեսդ խնդրեցի . ողոր-
մէ՛ ինձի քու խօսքիդ համեմատ :

59 Իմ ճամբաներուն վրայով մտածեցի , և իմ
ոտքերս քու վկայութիւններուդ դարձուցի :

60 Քու պատուիրանքներդ պահե՛լու արտօրացի
ու չուշացայ :

61 Ամբարիշտներուն խումբերը իս պատեցին ,
Բայ ես քու օրէնքդ չմոռցայ :

62 Կէս զիշերին կ'եղեմ քեզն զոհութիւն մա-
տուցանելու քու արդար դատաստաններուդ
համար :

63 Ես ընկեր եղայ ան ամենուն որ քեզմէ կը
վախան , ու քու հրամաններդ կը պահեն :

64 Ո՛վ Տէր՝ երկիրը լեցուն է քու ողորմութե-
ամբդ , սարվցուր ինձի քու կանոններդ :

Դ Ի Թ

- 65 Բարութիւն ըրիր քու ծառայիդ՝ ո՛վ Տէր , քու խօսքիդ համեմատ :
- 66 Բարի իմաստութիւն ու զիտութիւն սորվեցուր ինձի : Ինչու որ քու պատուիրանքն էրուդ հաւատացի :
- 67 Քանի որ վշտացած չէի , կը սխալէի . բայց հիմա քու խօսքդ կը պահեմ :
- 68 Բարի ես դուն , ու բարերար . սորվեցուր ինձի քու կանոններդ :
- 69 Ամբարտաւանները ստութիւն հնարեցին ինձի դէմ . Բայց ես բոլոր սրտով քու հրամաններդ պահեցի :
- 70 Անոնց սիրտը ճարպի պէս պարարտացաւ . Բայց ես քու օրէնքովը ուրախացայ :
- 71 Աղէկ եղաւ ինձի որ վշտացայ , որպէս զի քու կանոններդ սորվիմ :
- 72 Ինձի հազարաւոր ոսկիէ ու արծաթէ աւելի աղէկ է քու բերնիդ օրէնքը :

Ե Օ Տ

- 73 Չիս քու ձեռքերդ ըրին ու ստեղծեցին . իմաստուն ըրէ զիս , որ քու պատուիրանքներդ սորվիմ :
- 74 Քեզմէ վախցողները իս պիտի տեսնեն ե ուրախանան . Ինչու որ քու խօսքիդ յուսացայ :
- 75 Գիտեմ ո՛վ Տէր , որ քու դատաստաններդ արդարութիւնով են . ու իրաւունքով զես վշտացուցիր :
- 76 Հիմա թող քու ողորմութիւնդ ինձի միութարութիւն ըլլայ քու ծառայիդ Գոհացի՛ր համեմատ :
- 77 Թող քու զթութիւններդ իմ վրաս դան որ

ապրիմ . վստան զի քու օրէնքդ իմ ուրախութիւնս է .

- 78 Ամբարտաւանները պիտի ամչնան . Ինչու որ առանց պատճառի անիրաւութիւն ըրին ինձի դէմ . Բայց ես քու հրամաններուդ վրայ պիտի մտածեմ :
- 79 Թող ինձի դառնան քեզմէ վախցողները , և քու վկայութիւններդ ծանցցողները :
- 80 Թող իմ սիրտս կատարեալ ըլլայ քու կանոններուդ մէջը , անանկ որ չամչնամ :

Բ Ա Փ

- 81 Իմ անձս քու փրկութեանդ կը կարօտի , եւ քու խօսքիդ կը յուսամ :
- 82 Իմ աչքերս քու խօսքիդ համար կը նուազին , ըսելով թէ՛ Ե՞րբ պիտի միութարես զիս :
- 83 Ինչու որ ես ծուխի մէջ Գոհացի՛ր տիկի պէս եղայ . Բայց քու կանոններդ չմոռցայ :
- 84 Որչափ են քու ծառայիդ օրերը . իս հալածողներուն ե՞րբ դատաստան պիտի ընես :
- 85 Ամբարտաւանները փոսեր փորեցին ինձի համար , որ քու օրէնքիդ պէս չեն :
- 86 Քու բոլոր պատուիրանքներդ ճշմարիտ են : Ղուր տեղը զիս կը հալածեն , օդնէ ինձի :
- 87 Քիչ մնաց որ զիս կորսնցնէին երկրին մէջ . բայց ես քու հրամաններդ չթողուցի :
- 88 Քու ողորմութեանդ համեմատ կենդանացուր զիս , և քու բերնիդ վկայութիւնը պիտի պահեմ :

Լ Ա Մ Ի Տ

- 89 Ո՛վ Տէր՝ քու խօսքդ յաւիտեան հաստատ է երկինքի մէջ :
- 90 Քու հաւատարմութիւնդ ազգէ մինչև ազգ կը մնայ . դուն հաստատեցիր երկիրը ու կը կենայ :

- 91 Բու հրամաններուդ պէս կը կենան փշուկայսօր . ինչու որ բոլորը քու ծառաներդ են :
- 92 Թէ որ քու օրէնքդ իմ ուրախութիւնս չըլլար, ան ատենը կորսուած պիտի ըլլայի իմ տրամութեանս մէջ :
- 93 Յաւիտեան պիտի չմոռնամ քու հրամաններդ, քանզի անոնցմով կենդանացուցիր զիս :
- 94 Ես քուկդ եմ, փրկէ զիս . ինչու որ քու հրամաններդ փտուեցի :
- 95 Ամբարիշտները ինձի սպասեցին, որ իս կորսնցընեն . բայց ես քու վկայութիւններդ միտքս պիտի բերեմ :
- 96 Ամէն կատարելութեան վերջը տեսայ . քու պատուիրանքդ շատ ընդարձակ է :

Մ Է Մ

- 97 Ո՛րչափ կը սիրեմ քու օրէնքդ . ան է ամէն օր իմ մտածութիւնս :
- 98 Բու պատուիրանքներդ զիս իմ թշնամիներէս իմաստուն ըրիք . քանզի անոնք միշտ իմ բովս են :
- 99 Իմ բոլոր ուսուցիչներէս աւելի հանձարեղ եղայ . ինչու որ քու վկայութիւններդ իմ մտածութիւնս են ,
- 100 Ծերերէն աւելի իմաստուն եղայ, վասն զի քու հրամաններդ պահեցի :
- 101 Ամէն գէշ ճամբայէն իմ ոտքերս ետ քաշեցի, որ քու խօսքդ պահեմ :
- 102 Բու դատաստաններդ չխտորեցայ . ինչու որ դուն սովվեցուցիր ինձի :
- 103 Ո՛րչափ քաղցր է քու խօսքդ իմ քմացս . մեղրէն աւելի աւուր է իմ բերնիս :
- 104 Բու հրամաններդ իմաստուն եղայ . աշնոր համար ստութեան ամէն ճամբան ատեցի :

Ն Ո Ի Ն

- 105 Բու խօսքդ իմ ոտքերուս ճրագ է, ու իմ շաւիղներուս ըլլայ :
- 106 Երդում ըրի, ու պիտի կատարեմ, որ քու արդար դատաստաններդ պահեմ :
- 107 Շատ նեղացայ, ով Տէր, կենդանացուց զիս քու խօսքիդ համեմատ :
- 108 Հիմա իմ բերնիս կամաւոր զոհերը ընդունէ՛ ով Տէր, ու քու դատաստաններդ սորվեցուր ինձի :
- 109 Իմ հոգիս ամէն ժամանակ ափիս մէջն է . բայց քու օրէնքդ չեմ մոռնար :
- 110 Ամբարիշտները որոգայթ լարեցին ինձի համար . բայց ես քու հրամաններդ չմոլորեցայ :
- 111 Բու վկայութիւններդ յաւիտեան ինձի ժառանգութիւն առի . ինչու որ անոնք իմ սրտիս յնձուութիւնս են :
- 112 Խոնարհեցուցի իմ սիրտս, որ քու կանոններդ կատարեմ յաւիտեան մինչև վերջը :

Ս Ա Մ Է Ս

- 113 Երկմիտ Դաւթիները ատեցի, բայց քու օրէնքդ սիրեցի :
- 114 Իմ ապաւէնս ու ասպարս դուն ես, քու խօսքիդ յուսացայ :
- 115 Եւ տ. բաշուեցէք ինձմէ՛ ով չարագործներ, ինչու որ ես իմ Աստուծոյս պատուիրանքները պիտի պահեմ :
- 116 Պահպանէ՛ զիս քու խօսքիդ համեմատ, որ ապրիմ . և զիս իմ յոյսէս մի՛ ամչցընէր :
- 117 Չօրացուր զիս որ ապրիմ, ու միշտ քու կանոններուդ ուշադրութիւն ընեմ :
- 118 Անարդեցիր ան ամէնը՝ որ քու կանոններդ

խոտորեցան . քանզի անոնց նենդութիւնը սուտ է :

119 Դուն Բարաշէրն կղզանք կը համարիս երկրի բոլոր ամբարիշտները . անոր համար ես քու վկայութիւններդ կը սիրեմ :

120 Իմ մարմինս քու աչէդ դողաց , ու ես քու դատաստաններէդ վախցայ :

Ա Յ Ի Ն

121 Իրաւունք ու արդարութիւն ըրի . զիս իմ նեղիչներուս մի՛ մասներ :

122 Քու ծառայիդ՝ բարութեան համար երաշխաւոր եղիր , որ ամբարտաւանները չհարբստահարեն զիս :

123 Իմ աչերես նուաղեցան քու փրկութեանդ համար , ու քու արդարութեանդ խօսքին համար :

124 Ըրէ՛ քու ծառայիդ քու ողբմութեանդ համեմատ , և քու կանոններդ սորվեցնուր ինձի :

125 Ես քու ծառայեմ , իմաստուն ըրէ զիս , որ քու վկայութիւններդ ճանչնամ :

126 Տերոջը բան տեսներու ժամանակն է . Ինչո՞ւ որ քու օրէնքդ խափանեցին :

127 Անոր համար քու պատուիրանքներդ ոսկիէն՝ ու ազնիւ ոսկիէն աւելի սիրեցի :

128 Ուստի ամէն բանի վրայով պարտաւորեալ եմ բոլոր հրամաններդ ուղեղ կը համարիմ , որ ստութեան ամէն ճամբան կ'ատեմ :

Փ Ի

129 Քու վկայութիւններդ զարմանայի են . անոր համար իմ անձս անոնք կը պահէ :

130 Քու խօսքերուդ յայտնուիլը լոյս կու տայ , որ միամիտները իմաստուն կ'ընեն :

131 Իմ բերանս բացի ու հեացի . վասն զի քու պատուիրանքներուդ ցանկացայ .

132 Ինձի նայէ ու ողբով՝ ինձի , ինչպէս որ սովորաբար է՝ ընէ . քու անունդ սիրողնե՞րուն :

133 Իմ զնացքներս հաստատէ՛ քու խօսքիդ մէջը , ու բնաւ անօրէնութիւն մը չտիրէ ինձի :

134 Փրկէ՛ զիս մարդոց բռնութենէն , և քու հրամաններդ պիտի պահեմ :

135 Երեսդ փայլեցուր քու ծառայիդ վրայ , ու սորվեցնուր ինձի քու կանոններդ :

136 Ջուրերու ատուններ կ'իջնեն իմ աչերեսս . ինչու որ Բարաշէր քու օրէնքդ չպահեցին :

Յ Ա Տ Ի

137 Արդար ես դուն՝ ո՞վ Տէր , և քու դատաստաններդ ուղեղ են :

138 Քու պատուիրած վկայութիւններդ արդար ու խիստ ճշմարիտ են :

139 Իմ նախանձս իս մաշեց . ինչու որ իմ թշնամիներս քու խօսքերդ մոռցան :

140 Քու խօսքդ խիստ մաքուր է . անոր համար քու ծառայդ անխկայ կը սիրէ :

141 Ես ցած ու անարդուած եմ , Բարաշէր քու հրամաններդ չմոռցայ :

142 Քու արդարութիւնդ յախտնական արդարութիւն է , ու քու օրէնքդ ճշմարտութիւն է :

143 Նեղութիւնը ու ցարը իս գտան . Բարաշէր քու պատուիրանքներդ իմ ուրախութիւնս են :

144 Քու վկայութիւններուդ արդարութիւնը յախտեան է . իմաստուն ըրէ զիս , ու պիտի ապրիմ :

Գ Օ Փ

- 145 Բոլոր սրտով աղաղակեցի . ո՛վ Տէր՝ պատասխան տուր ինձի , ու քու կանոններդ պիտի պահեմ :
- 146 Բեզեի աղաղակեցի , փրկէ՛ զես , և քու վկայութիւններդ պիտի պահեմ :
- 147 Կանուխ ելայ արշալոյսին , ու աղաղակեցի . քու խօսքիդ յուսացայ :
- 148 Գիւնդու պահերէն առաջ բացուեցան իմ աչքերն . քու խօսքերուդ վրայ մտածելու համար :
- 149 Իմ ձայնս լսէ՛ . քու ողորմութեանդ համեմատ . ո՛վ Տէր՝ քու դատաստաններուդ համեմատ կենդանացուր զես :
- 150 Անօրէնութեան հետեղները մտեցան . անոնք քու օրէնքիդ հեռացան :
- 151 Ո՛վ Տէր՝ դուն մօտ ես , ու քու բոլոր պատուիրաններդ ճշմարտութիւն են :
- 152 Առաջուց իմացած եմ քու վկայութիւններէդ , որ անոնք յաւիտեան հաստատեցիր :

Բ Ի Շ

- 153 Տէս իմ խղճութիւնս , ու իս փրկէ՛ . ինչու որ քու օրէնքդ չմոռցայ :
- 154 Իմ իրաւունքս պաշտպանէ՛ ու փրկէ՛ զես . քու խօսքիդ համեմատ կենդանացուր զես :
- 155 Փրկութիւնը հեռու է ամբարիշտներէն . վասն զի քու կանոններդ չխնդրեցին :
- 156 Ո՛վ Տէր՝ քու զթուութիւններդ շատ են . քու դատաստաններուդ համեմատ կենդանացուր զես :
- 157 Շատ են իմ հալածիչներս ու թշնամիներս . Բայ ես քու վկայութիւններէդ չխտորեցայ :

- 158 Անօրէնները տեսայ ու զոռեցայ . ինչու որ անոնք քու խօսքդ չէին պահեր :
- 159 Նայէ՛ որ քու հրամաններդ կը սիրեմ . ո՛վ Տէր՝ քու ողորմութեանդ համեմատ կենդանացուր զես :
- 160 Քու խօսքիդ սկիզբը ճշմարտութիւն է , ու քու բոլոր արդար դատաստաններդ յաւիտեան են :

Շ Ի Ն

- 161 Իշխանները զուր տեղը իս հալածեցին . բայց իմ սիրտս քու խօսքդ վախցաւ :
- 162 Ես կը ցնծամ քու խօսքերովդ շատ աւար գտնողի պէս :
- 163 Ստութիւնը ատեցի ու անարդեցի . Բայ քու օրէնքդ սիրեցի :
- 164 Օրը եօթը անգամ կ'օրհնեմ քեզ , քու արդար դատաստաններուդ համար :
- 165 Քու օրէնքդ սիրողներուն շատ խաղաղութիւն կայ . ու անոնց դայթակլութիւն չըլլար :
- 166 Ո՛վ Տէր՝ քու փրկութեանդ սպասեցի , և քու պատուիրաններդ կատարեցի :
- 167 Իմ անձս քու վկայութիւններդ պահեց , ու ես անոնք շատ կը սիրեմ :
- 168 Քու հրամաններդ և քու վկայութիւններդ պահեցի . ինչու որ իմ բոլոր ճամբաներս քու առջիդ են :

Թ Ա Վ

- 169 Ո՛վ Տէր՝ թող իմ աղաղակս քու առջիդ մօտենայ . քու խօսքիդ համեմատ իմաստուն ըրէ՛ զես :
- 170 Թող իմ աղաչանքս քու առջիդ ելլէ . քու խօսքիդ համեմատ փրկէ՛ զես :
- 171 Իմ շրթունքներս օրհնութիւն պիտի բերու-

խեն . վասն զի քու կանոններդ սորվեցուցիր
ինձի :

172 Իմ լեզուս քու խօսքդ պիտի պատմե . ինչու
որ քու բոլոր պատուիրանքներդ արդար են :

173 Թող քու ձեռքդ ինձի օրհական ըլլայ .
ինչու որ քու հրամաններդ ընտրեցի :

174 Ո՛վ Տէր՝ քու փրկութեանդ ցանկացայ ,
ու քու օրհնքդ իմ ուրախութիւնս է :

175 Թող իմ անձս ապրի ու քեզ օրհնէ , և
քու դատաստաններդ օգնեն ինձի :

176 Կորուսած ոչխարի պէս մնըրեցայ . փրնտ-
ուէ քու ծառայ , ինչու որ քու պատուի-
րանքներդ չմոռցայ :

Ս Ա Ղ Մ . Ժ Ի

Աստիճաններուն երգը :

1 Իմ նեղութեանս մէջ Տէրովը աշաղակեցի ,
ու անիկայ ինձի պատասխան տուա :

2 Ո՛վ Տէր՝ փրկէ իմ անձս սուտ շրթունքնե-
րէն , ու նենդաւոր լեզուէն :

3 Նենդաւոր լեզուն քեզի ի՞նչ կու տայ , և
քեզի ի՞նչ կ'աւելցընէ :

4 Զօրաւոր մարդուն սուր նետերը , ու զիհիկն
կայծերը :

5 Վայ ինձի՛ որ Մոսորի մէջ պանդուխտ ե-
ղայ , և Կեդարի վրաններուն քովըր բնակեցայ :

6 Շատ ժամանակ իմ անձս բնակեցաւ խա-
ղաղութիւնը ատողներուն հետ :

7 Ես խաղաղասէր էի . ըսյց երբոր կը խօսէի ,
անոնք կուր ի՛նչէն :

Ս Ա Ղ Մ . Ժ Ի Ա

Աստիճաններուն երգը :

1 Ըջերս դէպ 'ի լեռները պիտի վերցընեմ՝ ,
ուսկից որ իմ օգնութիւնս պիտի գայ :

2 Իմ օգնութիւնս Տէրովմէն է , ան որ եր-
կինքը ու երկիրը ստեղծեց :

3 Անիկայ քու ոտքը չողացընէ , ու քու
Պահպանող չբնանայ :

4 Ահա Իսրայելի Պահպանող պիտի չմրափէ ու
պիտի չբնանայ :

5 Տէրը քու պահպանող է . Տէրը քու աջ
ձեռքիդ քովը քու հովանիդ է :

6 Յորեկը արեղակը քեզ պիտի չզարնէ , ո՛չ
ալ գիշերը լուսիրը :

7 Տէրը քեզ ամէն չարէն պիտի պահպանէ .
քու անձդ պիտի պահպանէ :

8 Տէրը քու ելլելը ու մտնելը պիտի պահպանէ ,
ասկէ ետև մինչև յաւիտեան :

Ս Ա Ղ Մ . Ժ Ի Բ

Դաւիթի աստիճաններուն երգը :

1 Սուրբախանայի երբոր ինձի կ'ըսէին . Տե-
րովը տունը երթանք :

2 Մեր ոտքերը քու դռներուդ մէջը կայնեցան ,
ո՛վ երուսաղէմ :

3 Երուսաղէմը ահա՛ քաղաքի մը պէս շինուած
է , որ ինքնիրեն միաւորուած է .

4 Որ ցեղերը Տէրովը ցեղերը հոն կ'ելլեն՝ Իս-
րայէլին պատուիրածին պէս , Տէրովը անուա-
նը գօհուութիւն մատուցանելու համար :

5 Ինչու որ հոն դրուած են դատաստանի ա-
թոռները , Դաւիթին տանը աթոռները :

6 Երուսաղէմի խաղաղութիւնը ինդրեցէք .
Թող յաջողին անոնք որ քեզ կը սիրեն :

7 Խաղաղութիւն թող ըլլայ քու պարիսպնե-
րուդ մէջը , ու յաջողութիւն քու պալատ-
ներուդ մէջը :

8 Իմ եղբայրներուս ու ընկերներուս համար հի-
մա պիտի ըսեմ . խաղաղութիւն ըլլայ քեզի :

9 Մեր Տէր Աստուծոյն տանը համար՝ քեզի բարութիւն պիտի ուզեմ :

Ս Ա Ղ Մ . Ճ Ի Գ

Աստիճաններուն երգը :

- 1 Քեզի կը բարձրացնեմ իմ աչքերս , ո՛վ երկինքի մէջ բնակող :
- 2 Ահա ինչպէս որ ծառաներուն աչքերը իրենց տիրոջը ձեռքին եւ նայն , ու ինչպէս որ աղախինին աչքերը իր տիկնոջը ձեռքին , անանկ ալ մեր աչքերը Տէրոջը մեր Աստուծոյն դէմ նայն , մինչև որ մեզի ողորմի :
- 3 Ողորմէ՛ մեզի՛ ո՛վ Տէր , ողորմէ՛ մեզի , ինչու որ խիստ լեցուեցանք անարգանքով :
- 4 Խիստ լեցուած է մեր անձը գոռոզներուն նախատիկքովը , ու ամբարտաւաններուն անարգանքովը :

Ս Ա Ղ Մ . Ճ Ի Գ

Դասիճի աստիճաններուն երգը :

- 1 Թէ որ Տէրը մեր հետը չըլար , հիմա Իսրայէլը թող բռէ :
- 2 Թէ որ Տէրը մեր հետը չըլար , երբ որ մարդիկ մեր վրայ ելան .
- 3 Ան ատենը որջ որջ պիտի կլէին մեզ , երբ որ անոնց բարկութիւնը մեր վրայ բոբբօքած էր .
- 4 Ան ատենը ջուրերը մեզ պիտի ընկղմէին , հեղեղը մեր անձերուն վրայէն պիտի անցնէր .
- 5 Ան ատենը հպարտացած ջուրերը մեր անձերուն վրայէն պիտի անցնէին :
- 6 Օրջնակ ըլլայ Տէրը , որ մեզ անոնց ակուներուն օրս չտուա :
- 7 Մեր անձեր ձեճղուկի պէս որտղղներուն որողայթէն աղատեցան . որողայթը կոտորեցաւ , ու մենք ազատեցանք :

8 Մեր օգնութիւնը Տէրոջը անունովն է , ան որ երկիրը ու երկիրը ստեղծեց :

Ս Ա Ղ Մ . Ճ Ի Ե

Աստիճաններուն երգը :

- 1 Տէրոջը յուսացողները Սիօն լեռանը պէս են , որ չսասանցի , հաղա յաւիտեան կը մնայ :
- 2 Ինչպէ՛ որ Երուսաղէմը լեռներով պատած է , նոյն ալ Տէրը իր ժողովուրդին չորս կողմն է , ասկէ ետե մինչև յաւիտեան :
- 3 Ինչու որ ամբարշտին դաւազանը արդարներուն վիճակին վրայ պիտի չմնայ , որ արդարները ձեռքերին անօրէնութեան չերկնցնեն :
- 4 Ո՛վ Տէր՝ բարիք բրէ բարիներուն , ու սրտով ուղիղներուն :
- 5 Սակայն անոնք որ իրենց ծուռ ճամբաներուն մէջը կը մոլորին , Տէրը պիտի կորսնցնէ աւօրէնութիւն գործողներուն հետ : Խաղաղութիւն քաջ Իսրայէլին վրայ :

Ս Ա Ղ Մ . Ճ Ի Զ

Աստիճաններուն երգը :

- 1 Երբ որ Տէրը Սիօնի դերութիւնը դարձուց , երազ տեսնողներու պէս եղանք :
- 2 Ան ժամանակը մեր բերանը խնդութիւնով լեցուեցաւ , ու մեր լեզուն ցնծութիւնով . ան ժամանակը հեթանոսաց մէջ ըսին թէ՛ Տէրը ասոնց համար մեծ բաներ ըրաւ :
- 3 Տէրը մեզի համար մեծ բաներ ըրաւ , ու մենք ուրախացանք :
- 4 Ո՛վ Տէր՝ դարձուր մեր դերութիւնը հարաւին առուներուն պէս :
- 5 Անոնք որ արցունքով կը ցանեն , ցնծութիւնով պիտի փճեն :

6 Ան որ լայով կ'երթայ ցանկելու սերմը տա-
նելով, անշուշտ ցնծութեամբ ետ պիտի
դառնայ իր ցորենէ խորձերը բերելով :

Ս Ա Ղ Վ . Ճ Ի Է

Ստոիճանի աստիճաններուն երգը :

- 1 Թա՛հ որ Տէրը չէ՛նէ տունը, զուր տեղը կ'աշ-
խատին անոր շնորհները . թէ որ Տէրը
չպահպանէ քաղաքը, զուր տեղը կը հսկեն
պահպանները :
- 2 Պարագ քան է ձեզի համար կանուխ ելելը,
է ուշ հանդէլը, ու ցառով հաց ուտելը .
յիրաւի անիւն իր սիրելին քուն կու տայ :
- 3 Ահա տղաքը Տէրովը ժառանգութիւնն են .
որովայնի պտուղը անոր պարգէն է :
- 4 Ինչպէս են նեւերը զօրաւորին ձեռքին մէջը,
այնպէս են երիտասարդներուն տղաքը :
- 5 Երանի ան մարդուն որ իր կապարձը անոնց-
մով լեցուց . երբոր դրանք մէջ թշնամեաց
հետ խօսելու ըլլան, պիտի չամչնան :

Ս Ա Ղ Վ . Ճ Ի Ը

Աստիճաններուն երգը :

- 1 Երանի ան ամենուն որ Տէրովմէն կը վախ-
նան, ու անոր ճամբաներուն մէջը կը
քայլեն :
- 2 Վասն զի քու ձեռքիդ աշխատութիւնը
պիտի ուտես . երանի է քեզի, ու քեզի բարի
պիտի ըլլայ :
- 3 Քու կնիկդ պողաբեր որթի մը պէս պիտի
ըլլայ քու տանդ ներսի դիերը, ու քու որդի-
ներդ ձիթենիի տունկերու պէս՝ քու սեղանիդ
չորս կողմը :
- 4 Ահա Տէրովմէն վախցող մարդը ասանկ պի-
տի օրջուի :

- 5 Տէրը քեզ քիտնէն օրջնէ, ու Երուսաղեմին
բարութիւնը տեսնես քու կենացդ բոլոր օրե-
րուն մէջը :
- 6 Եւ քու որբուցդ որդիները տեսնես : Խա-
ղաղութիւն ըստ Իօրայէլին վրայ :

Ս Ա Ղ Վ . Ճ Ի Թ

Աստիճաններուն երգը :

- 1 Իմա Իօրայէլը թող ըսէ . Իմ մանկութե-
նես 'ի վեր շատ անգամ իս նեղեցին .
- 2 Իմ մանկութենես 'ի վեր շատ անգամ իս
նեղեցին, բայց ինձի չյաղթեցին :
- 3 Հերկողներ իմ կոնակիս վրայ հերկեցին,
ու իրենց ախօսները երկրնցուցին :
- 4 Տէրը արդար է . անիկայ ամբարիշտներուն
չուանները կարտեց :
- 5 Սիօնը ատողներուն ամէնը պիտի ամչնան ու
ետ դառնան .
- 6 Տանիքի վրայի խտին պէս պիտի ըլլան, որ
դեռ չփրցուած կը չորնայ :
- 7 Որ նձողը չկրնար անով իր ձեռքը լեցնել,
ոչ ալ խուրձ կապողը իր դողը .
- 8 Եւ անցնողները չեն բեր թէ՛ Տէրովը օրջու-
թիւնը ձեր վրայ ըլլայ . ու ձեզ Տէրովը ա-
նունովը կ'օրջենք :

Ս Ա Ղ Վ . Ճ Լ

Աստիճաններուն երգը :

- 1 Սորունկ տեղերէն քեզի կանչեցին՝ ո՛վ Տէր :
- 2 Ո՛վ Տէր՝ իմ ձայն լսէ . քու ահանջներդ
թող մտիկ բնեն իմ աղօթքիս ձայնը :
- 3 Ո՛վ Տէր՝ թէ որ անօրէնութիւնները յիշե-
լու ըլլաս, Տէր ո՞վ կրնայ կենալ :
- 4 Բայց քու բովը է թողութիւնը, որ քեզ
մէ վախնան :

- 5 Ես Տէրոջը կը սպասեմ, իմ անձս կը սպասէ, ու անոր խօսքին կը յուսամ :
- 6 Առտուան սպասողներէն առտուան սպասողներէն աւելի իմ անձս Տէրոջը ! Ես սպասէ :
- 7 Իսրայէլը թող Տէրոջը յուսայ, ինչու որ Տէրոջը քովը ողորմութիւն կայ . ու անոր քովը շատ փրկութիւն կայ .
- 8 Եւ անիկայ պիտի փրկէ Իսրայէլը իր բոլոր անօրէնութիւններէն :

Ս Ա Ղ Մ . Ճ Լ Բ

Դաւիթի աստիճաններուն երգը :

- 1 Ո՛վ Տէր՝ իմ սիրտս չգողողացաւ, և իմ աչքերս չբարձրացան . ու ես մեծամեծ բաներու մէջ՝ և ինծմէ բարձր բաներու մէջ չբաւլցի :
- 2 Յիրաւի իմ անձս հանդարտեցուցի ու հանգրտացուցի իր ծոր կաթէն կտրուած տղու մը պէս . իմ անձս կաթէն կտրուած տղու մը պէս է :
- 3 Իսրայէլը թող Տէրոջը յուսայ ասկէ ետեւ մինչև յաւիտեան :

Ս Ա Ղ Մ . Ճ Լ Բ

Աստիճաններուն երգը :

- 1 Դաւիթին համար յիշէ ո՛վ Տէր, անոր բոլոր նեղութիւնը .
- 2 Որ ան երդում ըրաւ Տէրոջը, և ուխտ դրաւ Յակոբին Չօրաւորին,
- 3 Ըսելով թէ՛ իմ տանս ընակարանը չմոռնեմ, ու իմ փռած անկողինիս վրայ չելլեմ,
- 4 Թէ իմ աչքերուս քուն՝ և արտևանունքներուս նիբչում չտամ,
- 5 Մինչև որ Տէրոջը համար տեղ մը դռնեմ, ու Յակոբին Չօրաւորին համար ընակարան :

- 6 Ահա անոր վրայով լեցնիք Եփրատայի մէջ, և զանիկայ դտանք անտառի դաշտերուն մէջը :
- 7 Մտնենք անոր ընակարանները, ու երկրպագութիւն ընենք անոր պատուանդանին քովը :
- 8 Քու հանդատութեանդ քիչ ալ էլիբ՝ ո՛վ Տէր, դուն՝ ու քու զօրութեանդ տապանակը :
- 9 Քահանաներդ թող արդարութիւն հագնին, և քու սուրբերդ ցնծան :
- 10 Քու Դաւիթ ծառայիդ համար անդին մի դարձրենք քու օծելիդ երեսը :
- 11 Տէրը երդում ըրաւ Դաւիթին ճշմարտութեամբ, ու ետ չդառնար անկէ՛ թէ, Քու ուրովայնիդ պտուղէն քու ամօռիդ վրայ պիտի նստեցնեմ :
- 12 Թէ որ քու որդիներդ պահեն իմ ուխտս ու վկայութիւններս որ անոնց պիտի տրվեցնեմ, ու քիչ ալ անոնց որդիներն ալ քու ամօռիդ վրայ պիտի նստին յաւիտեան :
- 13 Ինչու որ Տէրը Սիօնը ընտրեց, և շառնայ իրեն ընակութեան համար ուզեց,
- 14 Ըսելով . Աս է յաւիտեան իմ հանգիստս . ասոր մէջը պիտի ընակիմ, ինչու որ ասիկայ ուզեցի :
- 15 Անոր պաշարը առատաբար պիտի օրնեմ, ու անոր աղբատները հացով պիտի կշտացնեմ :
- 16 Եւ անոր բահանաներուն փրկութիւն պիտի հաղցընեմ . ու անոր սուրբերը ուրախութեամբ պիտի ցնծան :
- 17 Ան տեղը Դաւիթին եղջիւր պիտի բուսցընեմ, ու ճրագ պիտի պատրաստեմ իմ օծելիս համար :
- 18 Անոր թշնամիներուն ամօթ պիտի հաղցընեմ, բայց անոր վրայ իր թաղը պիտի ծաղկէ :

Ս Ա Ղ Մ . Ճ Ղ Գ

Դասերի աստիճաններուն երգը :

- 1 Ահա որչափ բարի ու որչափ վայելուչ է որ եղբայրները էրբո՛ւ հեր միաբանութեամբ բնակին :
- 2 Ան ազնիւ իւղին պէս է , որ դիտուն վրայէն մօրուքին վրայ՝ Ահարոնին մօրուքին վրայ վազեց , ու մինչև անոր զգեստներուն ծայրը իջաւ :
- 3 Սիօնի լեռներուն վրայ իջած Հերմոնին շաղին պէս է . ինչու որ Տէրը հոն հաստատեց օրնութիւնը ու կեանքը մինչև յաւիտեան :

Ս Ա Ղ Մ . Ճ Ղ Գ

Աստիճաններուն երգը :

- 1 Աղէ՛ օրնեցէք Տէրը՝ ո՛վ Տէրօջը բոլոր ծառանները , որ Տէրօջը տունը կը կենար զիշերները :
- 2 Սուրբ տեղը ձեռքերնիդ վերցուցէք , ու օրնեցէք Տէրը :
- 3 Երկինքը ու երկիրը ստեղծող Տէրը թող օրնէ՛ քեզ Սիօնէն :

Ս Ա Ղ Մ . Ճ Ղ Ե

- 1 Ալելուիա : Օրնեցէք Տէրօջը անունը , օրնեցէք՝ ո՛վ Տէրօջը ծառաները ,
- 2 որ Տէրօջը տունը կը կենար , մեր Աստուծոյն տանը սրաններուն մէջը :
- 3 Օրնեցէք Տէրը , ինչու որ Տէրը բարի է . սաղմոս ըսէք անոր անուանը , ինչու որ քաղցր է :
- 4 Վասն զի Տէրը իրեն համար ընտրեց Յակոբը , ու Իսրայելը իրեն սեպհական ծառայութիւնը ըլլալու :
- 5 Վասն զի ես իմացայ , որ Եհովան մեծ է , ու մեր Տէրը բոլոր աստուածներէն :

- 6 Տէրը ամէն ինչ որ ուղեց՝ ըրաւ , երկինքի ու երկրի մէջ , ծովերուն ու բոլոր անդունդներուն մէջը :
- 7 Երկրի ծայրերէն շողիներ կը հանէ , անձրևի համար փայլակներ կը շինէ , ու հով կը հանէ իր շտեմարաններէն :
- 8 Անկէպ Եգիպտոսին առջնեկները զարկաւ մարդէ մինչև անասուն .
- 9 Եշաններ ու հրաշքներ խրկեց քու մէջդ՝ ո՛վ Եգիպտոս , Փարաոնին ու անոր բոլոր ծառաներուն վրայ .
- 10 Շատ ազգեր զարկաւ , ու զօրեղ թագաւորներ սպաննեց ,
- 11 Ամօրհացուց Սեհոն թագաւորը , Բասանի Ովգ թագաւորը , և Քանանու բոլոր թագաւորութիւնները .
- 12 Ու անոնց երկիրը ժառանգութիւն տուաւ , իր Իսրայել ժողովուրդին ժառանգութիւն :
- 13 Ո՛վ Տէր՝ քու անունը մինչև յաւիտեան կը հաչի . ո՛վ Տէր՝ քու յիշատակդ ազգէ մինչև ազգ :
- 14 Ինչու որ Տէրը իր ժողովուրդը կը դատէ և իր ժառանգրուց կ'ողորմի :
- 15 Հէթանոսաց կուռքերը արծաթ ու ոսկի են . մարդու ձեռքի դործքեր են .
- 16 Բերան ունին բայց չեն խօսիր . աչքեր ունին բայց չեն տեսներ .
- 17 Ականջներ ունին՝ բայց չեն լսեր , ու շունչ չկայ անոնց բերնին մէջը :
- 18 Անոնց նման բլբան անոնք շնոողները , ու բոլոր անոնց յուսացողները :
- 19 Ո՛վ Իսրայելի տունը՝ օրնեցէք Տէրը . ո՛վ Ահարոնի տունը՝ օրնեցէք Տէրը .
- 20 Ո՛վ Ղեթի տունը՝ օրնեցէք Տէրը . ո՛վ Տէրօջմէն վախցողներ՝ օրնեցէք Տէրը :

21 Օրհնակ ըլլայ Տէրը Սիօնէն, ան որ Երուսաղեմի մէջ կը բնակի: Ալէլուիա:

Ս Ա Ղ Մ . Ճ Լ Զ

- 1 Գոհացէք Տէրոջմէն, ինչու որ բարի է. ինչու որ անոր ողորմութիւնը յաւիտեան է.
- 2 Գոհացէք աստուածներուն Աստուծմէն. ինչու որ անոր ողորմութիւնը յաւիտեան է.
- 3 Գոհացէք տէրերուն Տէրոջմէն. ինչու որ անոր ողորմութիւնը յաւիտեան է.
- 4 Մինակ մեծ հրաշքներ ընողէն. ինչու որ անոր ողորմութիւնը յաւիտեան է.
- 5 Երկինքը իմաստութեամբ ստեղծողէն. ինչու որ անոր ողորմութիւնը յաւիտեան է.
- 6 Երկիրը ջուրերուն վրայ տարածողէն. ինչու որ անոր ողորմութիւնը յաւիտեան է.
- 7 Մեծամեծ լուսաւորներ ստեղծողէն. ինչու որ անոր ողորմութիւնը յաւիտեան է.
- 8 Արեգակը՝ որ ցորեկին իշխէ. ինչու որ անոր ողորմութիւնը յաւիտեան է.
- 9 Դուսինը ու աստղերը՝ որ զիշերին իշխեն. ինչու որ անոր ողորմութիւնը յաւիտեան է.
- 10 Եգիպտացոց անգրանիկները զարնողէն. ինչու որ անոր ողորմութիւնը յաւիտեան է.
- 11 Ու Իսրայէլը անոնց մէջէն հանողէն. ինչու որ անոր ողորմութիւնը յաւիտեան է.
- 12 Հզօր ձեռքով ու տարածուած բազուկով. ինչու որ անոր ողորմութիւնը յաւիտեան է.
- 13 Կարմիր ծովը երկուքի բաժնողէն. ինչու որ անոր ողորմութիւնը յաւիտեան է.
- 14 Ու Իսրայէլը անոր մէջէն անցնողէն. ինչու որ անոր ողորմութիւնը յաւիտեան է.
- 15 Եւ Փարաօնը ու անոր զօրքը Կարմիր ծովուն մէջը թօթվողէն. ինչու որ անոր ողորմութիւնը յաւիտեան է.

- 16 Իր ժողովուրդը անապատին մէջը պտտացնողէն. ինչու որ անոր ողորմութիւնը յաւիտեան է.
- 17 Մեծ թաղաւորներ զարնողէն. ինչու որ անոր ողորմութիւնը յաւիտեան է.
- 18 Ու զօրեղ թաղաւորներ սպաննողէն. ինչու որ անոր ողորմութիւնը յաւիտեան է.
- 19 Ամօրհացոց Սեհոն թաղաւորը. ինչու որ անոր ողորմութիւնը յաւիտեան է.
- 20 Ու Բասանի Ովզ թաղաւորը. ինչու որ անոր ողորմութիւնը յաւիտեան է.
- 21 Եւ անոնց երկիրը ժառանգութիւն տուողէն. ինչու որ անոր ողորմութիւնը յաւիտեան է.
- 22 Իր Իսրայէլ ծառային ժառանգութիւն. ինչու որ անոր ողորմութիւնը յաւիտեան է.
- 23 Մեր խոնարհութեանը մէջ մեզ յիշողէն. ինչու որ անոր ողորմութիւնը յաւիտեան է.
- 24 Ու մեր թշնամիներէն մեզ փրկողէն. ինչու որ անոր ողորմութիւնը յաւիտեան է.
- 25 Բոլոր մարմինի հաց տուողէն. ինչու որ անոր ողորմութիւնը յաւիտեան է.
- 26 Գոհացէք երկինքին Աստուծմէն. ինչու որ անոր ողորմութիւնը յաւիտեան է:

Ս Ա Ղ Մ . Ճ Լ Է

- 1 Ընդարիւնի ղետերուն քովը հոն կը նստէինք, ու Սիօնը միայրերնիս բերելով կու լայինք:
- 2 Անոր մէջը ուռիներուն վրայ կախեցինք մեր քնարները:
- 3 Ինչու որ մեզ գերի ընողները հոն մեզմէ երգ մը խնդրեցին, ու մեր կողոպտիչները ուրախութիւն, ըստով. Երգեցէք մեզ Սիօնին երգերէն:
- 4 Տէրոջը երգը ի՞նչպէս երգենք օտար երկրի մէջ:

- 5 Ո՛վ Երուսաղէմ՝ թէ որ քեզ մոռնամ , թող իմ աջ ձեռքս էր պաշտօն մոռնայ :
- 6 Թող իմ լեզուս իմ քմացս փակչն , թէ որ քեզ չսիշեմ , թէ որ Երուսաղէմը իմ զլխաւոր ուրախութենէս աւելի մեծ չհամարիմ :
- 7 Յիշէ ո՛վ Տէր՝ Եդովմի որդիները Երուսաղէմի օրուանը մէջ , որ կ'ըսէին . Փլցուցէք փռցուցէք մինչև անոր չմը :
- 8 Ո՛վ Բաբելոնի աւերող աղջիկը՝ երանի անոր , որ քեզ կը հատուցանէ մեզի ըրած գործքերուդ փոխարէնը .
- 9 Երանի անոր՝ որ քու զաւակներդ կը բռնէ ու բարի կը զարնէ :

Ս Ա Ղ Մ . Ճ Լ Թ

Ս-ւնս Դաւթի :

- 1 Քեզի զոհութիւն պիտի մատուցանեմ իմ բոլոր սրտովս . աստուածներուն առջին քեզի ազգմս պիտի երգեմ :
- 2 Երկրպագութիւն պիտի ընեմ դէպ 'ի քու սուրբ տաճարդ , և քու անուանդ զոհութիւն պիտի մատուցանեմ քու ողորմութեանդ ու ձմարտութեանդ համար . Ինչու որ քու բուրբ անունէդ վեր մեծցուցիք իմ խօսքդ :
- 3 Կանչած օրս պատասխան տուի ինձի , իմ անձիս մէջը զօրութիւնով զիս ուժովցուցիր :
- 4 Ո՛վ Տէր՝ Երկրին բոլոր թագաւորները քեզի զոհութիւն պիտի մատուցանեն , երբոր քու բերնիդ խօսքերը լսու .
- 5 Ու Տէրոջը ձամբաներուն մէջը պիտի երգեն . Ինչու որ Տէրոջը փառքը մեծ է :
- 6 Թէպէտ Տէրը բարձր է , բայց ցածը Լեդողը կը տեսնէ , ու բարձրամիտը հեռուէն կը ձանչնայ :
- 7 Թէ որ նեղութեան մէջ ալ քալեմ , դուն

զիս պիտի կենդանացրնես . իմ թշնամիներուս բարկութեանը դէմ քու ձեռքդ պիտի Երկրչնցրնես , և քու աջ ձեռքդ իս պիտի փրկէ :

8 Տէրը պիտի գործէ ինձի համար . ո՛վ Տէր՝ քու ողորմութիւնդ յաւիտեան է . քու ձեռացդ գործքերը երեսէ մի՛ ձգեր :

Ս Ա Ղ Մ . Ճ Լ Թ

Դիւստր երգեցողն . Սաղմոս Դաւթի :

- 1 Ո՛վ Տէր՝ իս քննեցիր ու ձանչցար :
- 2 Դուն գիտես իմ նստիլս ու ելլելս . իմ խորհուրդս հեռուանց կ'իմանաս :
- 3 Իմ շաւիղս ու պառկիլս կը քննես . ու իմ բոլոր ձամբաներս գիտես :
- 4 Ինչու որ բնաւ խօսք չկայ իմ լեզուիս վրայ , ահա ո՛վ Տէր՝ դուն ամէնը գիտես :
- 5 Իմ Ետեէս ու առջեէս զիս պաշարեցիր , և քու ձեռքդ իմ վրաս դիր :
- 6 Աս գիտութիւնը ինձի եխտ դարմանալ է . բարձր է ու չեմ կրնար հասկընալ անիկայ :
- 7 Ո՛ւր երթամ քու Հոգիէդ , և քու երեսդ ո՛ր փախչեմ :
- 8 Թէ որ Երկինքը Ելլեմ , դուն հոն ես . թէ որ դժոխքը անկողնս ընեմ . ահա դուն հոն ես .
- 9 Թէ որ արշալոյսին թեւերը առնեմ և ծովուն վերջի ծայրերը բնակիմ ,
- 10 Հոն ալ քու ձեռքդ ինձի պիտի առաջնորդէ , ու քու աջ ձեռքդ զիս պիտի բռնէ :
- 11 Թէ որ ըսեմ . Իրաջնէ խաւարը զիս պիտի ծածկէ , ա՛ն առի՛ն գիշերն ալ լոյս կ'ըլլայ իմ բոլորտիքս :
- 12 Մութիւն ալ քեզի խաւար չէ . հապա գիշերը ցորեկի պէս լուսաւոր կ'ըլլայ . խաւարը և լոյսը մի և նոյն բան է ու՝ առի՛ն :

- 13 Ինչու որ դուն ստեղծեցիր իմ երկկամունքներս, ու իմ մօրս որովայնին մէջը դուն իս ծածկեցիր :
- 14 Վը գոհանամ քեզմէ, որ ահաւոր ու զարմանալի կերպով ստեղծուեցայ . քու գործքերդ զարմանալի են, ու իմ անձս աղէկ դիտէ :
- 15 Իմ գոյութիւնս չճածկուեցաւ քեզմէ, երբոր զաղտուկ տեղը շինուեցայ, երկրի խորութեանցը մէջ ճարտարութեամբ կազմուեցայ :
- 16 Քու աչքերդ իմ անկատար կազմուածքս տեսան . ու առաջնորդողը քու գրքիդ մէջը դուռած էին, որ ժամանակին պիտի կազմուէին, երբոր դեռ անոնցմէ մէկը չկար :
- 17 Որչափ պատուական են ինձի քու խորհուրդներդ՝ ո՛վ Աստուած . որչափ մեծ է անոնց թիւը :
- 18 Թէ որ համբեմ անոնք, աւագէն շատ են . երբոր արթըննամ, դեռ քեզի հետ եմ .
- 19 Իրաւցընէ ամբարշտը պիտի սպանեն՝ ո՛վ Աստուած . ուրեմն ո՛վ արիւնահնէղ մարդիկ հեռացէք ինձմէ :
- 20 Անոնք քեզի դէմ նենդութեամբ կը խօսին . և քու թշնամիներդ քո առնալս պարագ տեղը կ'առնեն :
- 21 Քեզ ատողները չեմ ատեր՝ ո՛վ Տէր, ու քեզի դէմ ելլողներէն չեմ զօտւիր :
- 22 Չանոնք կատարեալ ատելութեամբ կ'ատեմ, և ինձի թշնամի կը համարեմ :
- 23 Փորձէ զիս ո՛վ Աստուած, ու զիտցիր իմ սիրտս . իս քննէ ու զիտցիր իմ մտածմունքներս,
- 24 Եւ նայէ թէ արդեօք չար ճամբու մէջ եմ, և զիս դէպ ՚ի յաւիտեանական ճամբան առաջ նորդէ :

Ս Ա Ղ Մ . Ճ Խ

Գլխաւոր երգեցողին . Սաղմոս Դաւթի :

- 1 Ո՛վ Տէր՝ չար մարդէն իս փրկէ, ու բռնաւոր մարդէն իս պահէ,
- 2 Որ անոնք սրտերնուն մէջ չար բաներ կը մտածեն, ու ամէն օր կ'օխններու համար կը ժողովուին :
- 3 Իրենց լեզուները օձի պէս սրեցին . իժի թոյն կայ անոնց շրթունքներուն տակը : (Սէլայ :)
- 4 Ո՛վ Տէր՝ զիս ամբարշտին ձեռքէն պահէ . զիս բռնաւոր մարդէն պահպանէ, որոնք իմ զնացքներս խափանելու խորհուրդ ըրին :
- 5 Ամբարտաւանները ինձի համար զաղտնի որոգայթ ու չուաններ լարեցին . ուսկան մը փռեցին իմ ճամբուս վրայ . վարմեր դրին ինձի համար : (Սէլայ :)
- 6 Ըսի Տէրոջը . Դուն ես իմ Աստուածս . ո՛վ Տէր՝ լսէ իմ աղաչանքիս ձայնը :
- 7 Ո՛վ Տէր Եհովայ՝ իմ փրկութեանս զօրութիւնը, դուն իմ զլեուս հովանի եղար պատերազմին օրը :
- 8 Ո՛վ Տէր՝ ամբարշտին ցանկութիւնները մի տար . անոր չար խորհուրդը մի՛ յաջողեր, որ լլալ իէ բարձրանան : (Սէլայ :)
- 9 Իս պաշարողներուն գլուխը՝ իրենց շրթունքներուն աշխատութիւնը պիտի ծածկէ :
- 10 Վառած ածուխներ պիտի իյնան անոնց վրայ . կրակի մէջ պիտի ձգէ զանոնք, ու խորունկ ջուրերու մէջ, որ բնա վեր չէլեն :
- 11 Չարախօս մարդը երկրի վրայ պիտի չճատատուի . թշուառութիւնը պիտի որսայ բռնաւոր մարդը, որ չունի կործանէ :
- 12 Գիտեմ որ Տէրը զատաստան պիտի ընէ ինզձին, ու իրաւունք՝ աղբատներուն :

13 Յիրաւի արդարները քու անունդ պիտի գովեն . ուղիղները քու առջիդ պիտի բնակին :

Ս Ա Ղ Մ . Ը Խ Ա

Սաղմոս Դաւթի :

- 1 Ո՛վ Տէր՝ քեզի կը կանչեմ , շուտով հասիր ինձի . ականջ դիր իմ՝ ձայնիս՝ երբոր քեզի կը կանչեմ :
- 2 Թող իմ աղօթքս խուսկի պէ՛ս քեզն շնուկուի . և իմ ձեռքերուս վեր վերցուելը երիկուան պատարային պէ՛ս :
- 3 Ո՛վ Տէր՝ պահպան դիր իմ բերնիս . ո՛ր իմ շրթունքներուս դուռը պահպանէ :
- 4 Իմ սիրտս չար բանի ետեէ խոտորելու մի՛ թողուր , որ անօրէնութիւն գործող մարդոց հետ դէշ գործքեր չընեմ , ու անոնց համադամ կերակուրներէն չուտեմ :
- 5 Արդարը թող զիս զարնէ : . ա՛ն ողորմութիւն է . և զիս յանդիմանէ . ա՛ն գլխու իւղ է . իմ գլուխս չմերժէ պա՛հիս . ինչու որ անոնց նշուած ինքներուն մէջն ալ պիտի աղօթեմ :
- 6 Երբ որ անոնց դատարարները ապառաժներու մէջ ձգուին , ան ատենը իմ խօսքերս պիտի լսեն , ինչու որ քաղցր են :
- 7 Ինչպէս որ հերկողը ու ձեղքողը իջ ցրուէ երկրի վրայ , ա՛նա՛ն և՛ մեր ոսկորները գերեզմանին բերանը ցիրուցան եղան :
- 8 Սակայն ո՛վ Տէր Եհովայ , իմ աչքերս դէպ ՚ի քեզն են . քեզն յուսացայ , իմ հոգիս մի մերկացրներ :
- 9 Ինձի համար լարուած որդայթէն , ու անօրէնութիւն գործողներուն վարմբէն իս պահէ :
- 10 Ամբարիշտները իրենց ցանցերուն մէջը պիտի իյնան , երբոր ես բոլորովն անցնիմ :

Ս Ա Ղ Մ . Ը Խ Բ

Դաւիթին երգը ո՛ր աղօթքը՝ երբոր ինքը այրին մէջն էր :

- 1 Ի՞մ ձայնովս Տէրօջը կ'աղաղակեմ . իմ ձայնովս Տէրօջը կ'աղաչեմ :
- 2 Իմ զանգատս անոր առջին կը թափեմ . իմ ներքութիւնս անոր առջին կը պատմեմ :
- 3 Երբոր հոգիս իմ մէջս կը մարեր , դուն իմ շաւիղս դիտցար . իմ քալած ճամբուս մէջ ինձի համար դաղտուկ որդայթ լարեցին :
- 4 Նայէ՛ աջ կողմը ու տես որ բնաւ իս ճանչցող մը չկայ . ապաւէնը ինձմէ կորուսեցաւ . բնաւ մէկը չկայ որ իմ անձիս համար հոգ բնէ :
- 5 Ո՛վ Տէր՝ քեզի աղաղակեցի , ո՛ր ըսի . Դուն ես իմ ապաւենս , և իմ վիճակս կենդանաց երկրին մէջ :
- 6 Ականջ դիր իմ աղաղակիս , ինչու որ շատ նուաստացայ . աղատէ զիս իմ հալածիչներէս , ինչու որ ինձմէ զօրաւոր են :
- 7 Իմ անձս բանտէն հանէ , որ քու անուանդ զոհութիւն մատուցանեմ . արդարները իմ չորս կողմն պիտի պատեն , երբոր ինձի բարութիւն բնես :

Ս Ա Ղ Մ . Ը Խ Գ

Սաղմոս Դաւթի :

- 1 Ո՛վ Տէր՝ լսէ իմ աղօթքս , ականջ դիր իմ աղաչանքիս . պատասխան տուր ինձի քու ճշմարտութիւնովդ , ո՛ր քու արդարութիւնովդ :
- 2 Եւ քու ծառայիդ հետ դատաստանի մի՛ մտներ . ինչու որ բնաւ կենդանի մը պիտի չարդարանայ քու առջիդ :
- 3 Վասն զի թշնամիս իմ անձս հալածեց . իմ կեանքս զետիկը զարկաւ , զիս շատոնցուրնէ մեռածներուն պէս մութը նստեցուց :

- 4 Եւ իմ հոգիս ներսի դիս մարեցաւ, իմ սիրտս ներսի դիս խռովեցաւ :
- 5 Առջի օրերը կը յիշեմ . քու բոլոր գործքերուդ վրայ կը մտածեմ . քու ձեռագոյր ըրածներուն վրայ կը խորհիմ :
- 6 Ձեռքերս դէպ 'ի բեզե կ'երկընցընեմ . իմ անձս չոր երկրի պէս բեզե կը ծոր-տի : (Սէլայ .)
- 7 Շուտով պատասխանս տուր ինձի ով Տէր . իմ հոգիս մարեցաւ . քու երեսդ մի՛ ծածկեր ինձմէ, որ դուրը իջնողներուն պէս չըլլամ :
- 8 Առտուանց քու ողորմութիւնդ ինձի լսել տուր, ինչու որ բեզե յուսացայ . իմ երթալու ճամբաս ինձի ցուցուր, վասն զի իմ անձս դէպ 'ի բեզե վերցուցի :
- 9 Ո՛վ Տէր՝ փրկէ զես իմ թշնամիներէս . Կն-տ- որ բեզ իմ ապաւէնս ըրի :
- 10 Սորվեցուր ինձի որ քու կամբոյ ընեմ . քանզի դուն ես իմ Աստուածս . թող քու բարի Հոգիդ զես ուղիղ երկիրը առաջնորդէ :
- 11 Ո՛վ Տէր՝ քու անուանոյ համար կենդանացուր զես . քու արդարութեամբդ իմ անձս նեղութենէ հանէ :
- 12 Եւ քու ողորմութեամբդ սատկեցուր իմ թշնամիներս, ու հորսընցուր բոլոր իմ անձս վշտացընողները . ինչու որ ես քու ծառադ եմ :

Ս Ա Ղ Մ . Ժ Խ Գ
Ս-՛՛-՛-՛ Դ-աւթի :

- 1 Օրջնեայ ըլլայ Տէրը՝ իմ վէճս, որ իմ ձեռքերս մարտնչելու կը վարժէ, ու իմ մատերս պատերազմուր :
- 2 Անիկայ է իմ ողորմութիւնս ու պարիսպս, իմ ապաւէնս ու իմ փրկիչս, իմ վահանս, և ես անոր կը յուսամ, որ իմ ժողովուրդս ինձի կը նազանդեցընէ :

- 3 Ո՛վ Տէր՝ մարդը ի՞նչ է որ զանիկայ կը ճանչնաս, ու մարդու որդին՝ որ զանիկայ կը յարդես :
- 4 Մարդը ունայնութեան պէս է, անոր օրերը՝ անցնող շուքի պէս են :
- 5 Ո՛վ Տէր՝ խոնարհեցուր քու երկինքդ, ու վար իջեր . լեռներուն դպչէ ու պիտի միանս :
- 6 Փայլակը նետէ ու ցրուէ զանոնք . քու նետերդ խրկէ ու զանոնք խռովեցուր :
- 7 Քու ձեռքդ վերեն խրկէ, և ապառէ զես . փրկէ զես մեծ ջուրերէն, ու օտարներուն ձեռքէն,
- 8 Որոնց բերանը ունայնութիւն կը խօսի, և անոնց աջ ձեռքը ստութեան աջ ձեռք է :
- 9 Ո՛վ Աստուած՝ բեզե նոր երգ պիտի երգեմ . տասը լար ունեցող տաւիղով սաղմոս պիտի ըսեմ բեզե :
- 10 Թագաւորներուն փրկութիւն տուողը, ու իր Դաւիթ ծառան չար սուրէն ազատողը ան է :
- 11 Իս աղատէ ու օտարներուն ձեռքէն փրկէ, որոնց բերանը ունայնութիւն կը խօսի, և անոնց աջ ձեռքը ստութեան աջ ձեռք է .
- 12 Որ մեր որդիքը իրենց երիտասարդութեանը մէջ տունկերու պէս մեծնան, ու մեր աղջիկները պալատի շէնքին համար փորադրուած անկիւնի քարերու պէս ըլլան .
- 13 Որ մեր ամբարները լեցուին, և ամէն տեսակ փեր-տ-բ-է-ր-ը ըզխեն . ու մեր ոչխարները հազարաւոր և բիւրաւոր ծնանին մեր արտերուն մէջը .
- 14 Որ մեր արջառները բազմածին ըլլան, ու ամենեւին բռնութեամբ մտնել ու ելլել չըլլայ, ոչ ալ աղաղակ՝ մեր հրապարակներուն մէջը :
- 15 Երանի ասանկ վիճակի մէջ եղող ժողովուր-

դին . երանի ու ժողովուրդին՝ որուն Աստուածը Եհովան է :

Ս Ա Ղ Մ . Գ Խ Ե
Օրհնութիւն Դասութի :

- 1 Քեզ պիտի բարձրացնեն՝ ո՞վ իմ Աստուածս , որ Թագաւոր ես , ու բու աշունդ յաւիտեանս յաւիտենից պիտի օրհնեմ :
- 2 Ամէն որ քեզ պիտի օրհնեմ , և բու անունդ յաւիտեանս յաւիտենից պիտի դովեմ :
- 3 Մեծ ու խիստ դովելի է Տէրը , ու անոր մեծութիւնը անքննելի է :

- 4 Ազգ ազգի պիտի դովէ բու դորձբերդ , և բու զօրութիւններդ պիտի պատմէ :
- 5 Բու փառացդ մեծութեանը վայելութիւնը , ու բու հրաշալի դորձբերդ պիտի զրուցեմ :

- 6 Եւ բու ահաւոր դորձբերդ պիտի խօսին , ու ես բու մեծութիւնդ պիտի պատմեմ :

- 7 Բու մեծ բարերարութեանդ յիշատակը պիտի հրատարակեն , և բու արդարութեամբդ պիտի ցնծան :

- 8 Ողորմած ու զթած է Տէրը . երկայնամիտ և բազումողորմ է :

- 9 Տէրը ամենուն բարի է . ու անոր ողորմութիւնները իր բոլոր դորձբերուն վրայ է :

- 10 Ով Տէր բու բոլոր դորձբերդ քեզ պիտի դովեն . և բու սուրբերդ քեզ պիտի օրհնեն :

- 11 Բու թագաւորութեանդ փառքը պիտի խօսին , ու բու զօրութիւնդ պիտի պատմեն :

- 12 Որ անոր զօրաւոր դորձբերդ ու անոր թագաւորութեանը փառաւոր մեծութիւնը մարդոց սրդիններուն զիտցնեն :

- 13 Բու թագաւորութիւնդ յաւիտենական թագաւորութիւն է , ու բու տէրութիւնդ ազդէ մինչև ազդ :

- 14 Տէրը կը հաստատէ բոլոր էյնալու վրայ եւ զօրները , և բոլոր վար ծուածները կը կանգնեցնէ :

- 15 Ամենուն աչքերը քեզի կը սպասեն . ու ժամանակին անոնց կերակուրը դուն անոնց կուտաս :

- 16 Բու ձեռքդ կը բանաս , ու ամէն կենդանիին փափաքը կը լեցնենս :

- 17 Տէրը արդար է իր բոլոր ճամբաներուն մէջ , ու ողորմած է իր բոլոր դորձբերուն մէջ :

- 18 Տէրը մօտ է ան ամենուն որ զիւրը կը կանչեն , ան ամենուն որ ճմարտութեամբ զննքը կը կանչեն :

- 19 Անիկայ իրմէն վախցողներուն փափաքը կը լեցնէ , և անոնց աղաղակը կը լսէ , ու կը փրկէ զանոնք :

- 20 Տէրը բոլոր զննք սերողները կը պահէ , սակայն բոլոր ամբարիշտները կը կորսոյնցնէ :

- 21 Իմ բերանս Տէրօջը դովութիւնը պիտի խօսի , ու ամէն մարմին անոր սուրբ անունը օրհնէ յաւիտեանս յաւիտենից :

Ս Ա Ղ Մ . Գ Խ Զ

- 1 Ալելուիա : Օրհնէ Տէրը , ո՞վ իմ անձս :

- 2 Տէրը պիտի օրհնեմ իմ կենացս մէջ , քանի որ ո՞չ եմ՝ իմ Աստուծոյս սաղմսս պիտի բնեմ :

- 3 Մի յուսար իշխաններուն , մարդու որդիին՝ որուն քով փրկութիւն չկայ :

- 4 Անոր հոգին կ'ըլէ , անիկայ իր հոգը կը դառնայ . նոյն օրը անոր խորհուրդները կը կորսուին :

- 5 Երանի անոր՝ որուն օգնականը Յակորին Աստուածն է , ու անոր յոյսը իր Տէր Աստուծոյն վրայ է ,

- 6 Ան որ երկինքը ու երկիրը՝ ծովը ու բոլոր անոնց մէջ եղածը ստեղծեց, ճշմարտութիւն կը պահէ յաւիտեան,
- 7 Իրաւունք կ'ընէ զբնութեանը, ու հաց կու տայ անօթիներուն. Տէրը կ'արձրկէ կապուածները ։
- 8 Տէրը կը բանայ կոյրերուն աչքերը. Տէրը կը կանգնեցնէ վար ծռածները. Տէրը կը սերտ արդարները .
- 9 Տէրը կը պահէ պանդուխտները, կը հաստատէ որը ու որբնարին. բայց ամբարիշտներուն ճամբան կը ծռէ ։
- 10 Տէրը պիտի թաղաւորէ յաւիտեան, բու Աստուածդ՝ ո՛վ Սիօն, ազգէ մինչև ազգ ։ Ալէլուիա ։

Ս Ա Ղ Մ . Ճ Խ Է

- 1 Գովեցէք Տէրու. ինչու որ բարի է մեր Աստուծոյն սաղմնս բռէր. ինչու որ քաղցր ու վայելուէ է օրնութիւնը ։
- 2 Տէրը կը շինէ Երուսաղէմը. Իսրայէլին ցըրուածները կը ժողովէ .
- 3 Սրտով կուտարածները կը բժշկէ. ու անոնց խոցերը կը փաթթէ .
- 4 Աստղերուն թիւը կը համրէ. անոնց ամէնն ալ երեւոյ անուններովը կը կանչէ ։
- 5 Մեծ է մեր Տէրը, ու իր զօրութիւնը շատ է. անոր իմաստութիւնը անհուն է ։
- 6 Տէրը կը հաստատէ խեղճերը. ու ամբարիշտները մինչև հողը կը խոնարհեցնէ ։
- 7 Երդեցէք Տէրոյն զոհութիւնով. մեր Աստուծոյն սաղմնս բռէք քնարով .
- 8 Ան որ երկինքը ամպերով կը ծածկէ, անձրև կը պարատտէ երկրիս համար, խոտ կը բուսցընէ լեռներուն վրայ .

- 9 Որ անասուններուն իրենց կերակուրը կու տայ, ու ազուաւին ձագերուն՝ որ կ'աղաղակեն ։
- 10 Անիկայ ձիուն զօրութեանը չհաճիր, մարդուն սրունքներուն չհասնիր ։
- 11 Տէրը կը հաւնի իրմէն վախցողներուն, ու իր ողորմութեանը յուսացողներուն ։
- 12 Ո՛վ Երուսաղէմ՝ դովէ Տէրը. օրնէ քու Աստուածդ ո՛վ Սիօն ։
- 13 Ինչու որ անիկայ քու դռներուդ նիղերը ամուրցուց, և քու որդիներդ քու մէջը օրնէց ։
- 14 Անիկայ քու սահմաններուդ խաղաղութիւն կու տայ, ու պարարտ ցորենով քեզ կը կշտացընէ ։
- 15 Անիկայ իր խօսքը երկրին մէջ կը խրկէ. իր խօսքը շուտով կը վազէ ։
- 16 Անիկայ բուրդի պէս ձիւն կու տայ, ու եղեամբ մոխրի պէս կը ցանէ ։
- 17 Իր սառը պատառներու պէս կը նետէ. անոր ցուրտին դէմ ո՛վ կրնայ կենալ ։
- 18 Անիկայ իր խօսքը կը խրկէ, ու կը հալեցընէ զանոնք. իր հովը փչել կու տայ, ու ջուրեր կը վազեն ։
- 19 Անիկայ իր խօսքը կը պատմէ Յակոբին, և իր կանոնները ու դատաստանները Իսրայէլին ։
- 20 Բնաւ մէկ ազգի մը ասանկ չըբաւ. ու անոնք անոր դատաստանները չձանցան ։ Ալէլուիա ։

Ս Ա Ղ Մ . Ճ Խ Ը

- 1 Ալէլուիա ։ Օրնեցէք Տէրը երկինքէն. օրնեցէք անիկայ բարձր տեղերուն մէջ ։
- 2 Օրնեցէք անիկայ՝ ո՛վ անոր բոլոր հրեշտակները. օրնեցէք անիկայ՝ ո՛վ անոր բոլոր զօրբերը ։

- 3 Օրձեցէք անիկայ ով արեղակ ու լուսին .
օրձեցէք անիկայ ով բոլոր փայլուն աստղեր :
- 4 Օրձեցէք անիկայ ով երկնից երկինքը , ու
երկինքէն վեր եղող ջուրեր :
- 5 Թող Տէրոջը անունը օրձեն . ինչու որ ինքը
հրամայեց , ու անոնք ստեղծուեցան :
- 6 Եւ զանոնք յաւիտեանս յաւիտենից հաս-
տատեց . կանոն դրաւ , որ չխափանուիր :
- 7 Օրձեցէք Տէրը երկրէն , ով վեշապներ , ու
բոլոր անդունդներ .
- 8 Կրակ և կարկուտ , ձիւն ու շոգի , և անոր
խօսքը կատարող մրբկալեց հով .
- 9 Լեռներ ու բոլոր բլուրներ , պտղատու ծա-
ռեր ու բոլոր եղևիններ .
- 10 Գաղաններ ու բոլոր անասուններ , սողա-
ցողներ ու թևաւոր թռչուններ .
- 11 Երկրի թագաւորներ և բոլոր ազգեր , իշխան-
ներ ու երկրի բոլոր դատաւորներ .
- 12 Երիտասարդներ և կոյս աղջկներ , ծերեր ու
տղաքներ .
- 13 Թող Տէրոջը անունը օրձեն . ինչու որ մի-
նակ անոր անունը բարձր է . անոր փառքը
երկրէն ու երկինքէն վեր է :
- 14 Անիկայ բարձրացուց իր ժողովուրդին եղ-
ջուրը , իր բոլոր սուրբերուն , իրեն մօտ եղող
ժողովուրդին , Խարայէլ որդւոցը օրձու թիւ-
նը : Ալէլուիա :

Ս Ա Ղ Մ . Ը Խ Թ

- 1 Ալէլուիա : Տէրոջը նոր երգ երգեցէք . «- ա-
նոր օրձու թիւնը սուրբերուն ժողովքին
մէջը :
- 2 Խարայէլը թող ուրախանայ իր Ստեղծողին
վրայ . Սիօնի որդիքը թող ցնծան իրենց Թա-
գաւորին վրայ :

- 3 Թող անոր անունը պարով օրհնեն . Թըմ-
բուկով ու քնարով սաղմոս թող բսեն անոր :
- 4 Ինչու որ Տէրը իր ժողովուրդին կը հաւնի .
խոնարձերը փրկու թիւնով պիտի փառաւորէ :
- 5 Թող սուրբերը ուրախանան փառքով , «-
իրենց անկողիններուն մէջը ցնծան :
- 6 Աստուծոյ գովու թիւնները անոնց բերնին
մէջը թող բլայ , ու երկու բերնով սուրճ ա-
նոնց ձեռքին մէջը :
- 7 Ար հէ թանոսներէն վրէժ առնեն , «- ժողո-
վուրդները պատժեն ,
- 8 Ար անոնց թագաւորները շոթաներով կա-
պեն , ու անոնց աղլուականները երկաթէ կա-
պանքներով ,
- 9 Ար դրուած դատաստանը անոնց վրայ կա-
տարեն . աս անոր բոլոր սուրբերուն փառքն
է : Ալէլուիա :

Ս Ա Ղ Մ . Ը Ծ

- 1 Ալէլուիա : Օրձեցէք զԱստուած իր սրբա-
րանին մէջ . օրձեցէք անիկայ իր զօրու-
թեանը հաստատութեանը մէջ :
- 2 Օրձեցէք անիկայ իր զօրաւոր գործքերուն
համար . օրձեցէք անիկայ իր մեծափառու-
թեանը համեմատ :
- 3 Օրձեցէք անիկայ փողի ձայնով . օրձեցէք
անիկայ տաւիղով ու քնարով :
- 4 Օրձեցէք անիկայ իր զօրուկով ու պարով .
օրձեցէք անիկայ լար ունեցող նուազարան-
ներով ու օրինգով :
- 5 Օրձեցէք անիկայ մեծաձայն ծնծղաներով .
օրձեցէք անիկայ ցնծու թեան ծնծղաներով :
- 6 Ամէն շունչ ունեցողը թող Տէրը օրձէ : Ա-
լէլուիա :

Yee



« Ազգային գրադարան



NL0161205

